

# Բանկերի գործարար շրջանառության սովորույթ՝ կապված հաշվի փակման ժամկետների հետ՝ հաճախորդի կողմից այդ կապակցությամբ դիմում ներկայացնելուց հետո



Պահանջներից մեկի քննության ընթացքում Հաշտարարը հարցում է ուղարկել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բանկերին՝ պարզելու համար ՀՀ բանկային համակարգում գործարար շրջանառության սովորույթները հետևյալ հարցերի հետ կապված.

1. եթե հաճախորդը Բանկին բանկային հաշվի և քարտի փակման դիմում է ներկայացրել, ինչ ժամկետում է իրականացվում բանկային հաշվի փակումը,
2. հաշվի և քարտի փակման դիմում ներկայացնելուց հետո հավաստագրվող (online) գործարքների իրականացման կասեցումն ինչ ժամկետում է իրականացվում,
3. հաշվի և քարտի փակման դիմում Բանկին ներկայացնելուց հետո որքան ժամանակահատվածում է դեռ հնարավոր իրականացնել հավաստագրվող գործարքներ ինտերնետով (ոչ երես առ երես գործարքներ)՝ օգտագործելով այդ նույն քարտի տվյալները,
4. առկա՞ է արդյոք հաշվի փակման պրոցեսի և ժամկետի տարբերություններ կապված հաճախորդին հաշվից դրամական միջոցների մնացորդի վերադարձման հետ, այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե առկա են հաճախորդին վերադարձման ենթակա դրամական միջոցներ, թե՛ ոչ, կարող,
5. փոխվել հաշվի փակման (ինչպես նաև դրա մաս կազմող հաշվով գործառնությունների կասեցման) ժամկետները (ՀՀ քաղ. օրենս- գրքի 927-րդ հոդվածի 3-րդ մաս):
6. հնարավո՞ր է արդյոք փակել քարտային հաշիվը՝ Հաճախորդի քարտային հաշվում եղած դրամական միջոցները փոխանցելով բանկային հաշվին, որը հնարավորություն կտա դադարեցնել քարտով իրականացվող հետագա գործարքները:

Հարցմանը պատասխանել են տասնվեց բանկեր: Ստորև ներկայացվում են հարցման արդյունքում բանկերի տված պատասխաններից սույն պահանջի քննության համար էական նշանակություն ունեցող հետևյալ հարցերին տրված պատասխանները՝ երբ է իրականացվում բանկային քարտի և հաշվի փակումը: Այսպիսով, ըստ յուրաքանչյուր բանկի տված պատասխանի՝ հակիրճ ներկայացվում է վիճակագրությունը.

1. հաշվի փակում՝ 2 ժամ 40 րոպեից ոչ ուշ,
2. քարտի փակում՝ 3-4 ժամ, հաշվի փակում՝ 3 աշխ. օր,
3. քարտի փակում՝ նույն օրը, հաշվի փակում՝ նույն օրը,
4. քարտի փակում՝ նույն օրը, հաշվի փակում՝ յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը, նախորդ շաբաթվա ընթացքում փակված քարտերի հաշիվները,
5. քարտի փակում՝ նույն օրը, հաշվի փակում՝ նույն օրը,
6. քարտի փակում՝ 1 բանկային օր, հաշվի փակում՝ 1 բանկային օր,
7. հաշվի փակում՝ նույն օրը,
8. քարտի կասեցում՝ 1 աշխատանքային օր, քարտի և հաշվի փակում՝ 5 աշխատանքային օր,
9. քարտի կասեցում՝ նույն օրը, հաշվի և քարտի փակում՝ վերջին գործարքի հաշվանցումից հետո,
10. քարտի կասեցում՝ նույն պահին, քարտի փակումը՝ նույն օրը, հաշվի փակում՝ անմիջապես,
11. քարտի կասեցում՝ նույն օրը, քարտի փակում՝ 3 օրվա ընթացքում, հաշվի փակում՝ 7 օրվա ընթացքում,
12. քարտի և հաշվի փակում՝ 24 ժամվա ընթացքում, Նախադեպեր, սովորույթներ
13. քարտի փակում՝ դիմումի ներկայացման պահին, հաշվի փակում՝ դիմումի ներկայացման պահին,
14. քարտի և հաշվի փակում՝ նույն կամ հաջորդ բանկային օրը,
15. քարտի փակում՝ նույն օրը,
16. քարտի սպասարկման դադարեցում 5 բանկային օր, հաշվի փակում՝ 45-օրյա ժամկետում, ընդ որում՝ պատասխանում չի նշված քարտի կասեցման և դիմումից հետո հավաստագրվող գործարքների իրականացման հնարավորության մասին:

Այսպիսով՝ Հաշտարարն արձանագրում է, որ գրեթե բոլոր բանկերը քարտի փակում են իրականացնում հենց քարտի և հաշվի փակման դիմում ներկայացնելու նույն օրը, որոշ բանկեր մինչև քարտի և/կամ հաշվի փակումն իրականացնում են նաև քարտի կասեցում, որը բացառում է դրա տվյալներով հավաստագրվող գործարքների իրականացումը: Իսկ ինչ վերաբերում է հենց հաշվի փակմանը, որով և վերջնականապես դրսևորվում է բանկային

հաշվի պայմանագրի լուծումը, ապա պետք է նշել, որ այստեղ բանկերի գործողությունները փոքր-ինչ տարբերվում են ժամանակային առումով, սակայն առավելապես ընդունված պրակտիկա է հանդիսանում պարտավորությունները մարված լինելու դեպքում բանկային հաշվի փակումը դիմում ներկայացնելու նույն օրը կամ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: